

**ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական
վերահսկողության վարչության պետ
պրն. Հ. Սուվարյանին**

Հարգելի պարոն Սուվարյան

Ի պատասխան Ձեր 31.01.11թ-ի թիվ 13-22/000137-11 գրության, կից ներկայացնում եմ ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման գործընթացը կարգավորող գործող կանոնները (կից առդիր 6 թերթ), ինչպես նաև ստորև ներկայացնում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի Ինսայդերների ցուցակը:

N	Ինսայդերների անունը	Անձնագրի սերիան և համարը	Հասցեն	Չեղբերված բաժնետոմսերի քանակը	Չեղբերված 5-րդ տրանշից պարտատոմսերի քանակը
1	Բեգլարյան Սամվել Զերբերտի	AK 0385296	Երևան Քաջազնունու 5 12	149861	15
2	Բաղայան Պապ Սերոբի	AK 0459910	Երևան Նազարբեկյան թղմ. 17 12	39	2
3	Գալստյան Գոհար	AK 0375635	Երևան, Թումանյան 21 4	24	
4	Բալիկյան Անահիտ	AB 0524239	Երևան, Դ-Ա զանգ., 216 25	22	
5	Ավայան Վարդկես	AE 0392979	Երևան, Ս.Խորենացու 1 փակ., տ. 11	21	
6	Ֆարմազյան Ռաֆայել	AA 0268373	Երևան, Նար-Ղոսի 4 20	11	
7	Եղոյան Աբգար	AB 0290902	Երևան, Շիրակի փ., 4-րդ նրբ. 11 10	10	
8	Բաբախանյան Ալեքսանդր	12-UL 578604	Երևան, Հալաբյան թաղ., 5 18	8	
9	Նալբանդյան Մարիամ	AE 0407532	Երևան, Դավիթաշեն 4թաղ. 41 21	2	
10	Բաբայան Գառնիկ	AH 0449041	ք. Վայք, Ջերմուկի խճուղի	2	
11	Բեգլարյան Արև Նորայրի	AK 0575375	Երևան Քաջազնունու 5 12		12
12	Բեգլարյան Արսեն Զերբերտի	AK 0278853	Երևան Քաջազնունու 5 13, 14		9
13	Բեգլարյան Ֆրունզե Սամվելի	AF 0734054	Երևան Քաջազնունու 5 12		5
14	Բեգլարյան Գոհար Սամվելի	AG 0494830	Երևան Քաջազնունու 5 12		4
15	Բալասանյան Արմեն Հայկի	AA 0673421	Երևան Բազրատունյաց 22 36		3
16	Դավթյան Իրինա	AB 0313205	Երևան Նար-Ղոսի 75շ.բն.58		
17	Յովհաննիսյան Երվանդ	AK 0584799	Ռոստովի 29շ.բն.145		

Գործադիր տնօրեն

Պապ Բաղայան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շեն Կոնցեռն»
փակ բաժնետիրական ընկերության
__01.06.2009թ.-ի
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում

Գործադիր տնօրեն՝ Պ. Բաղալյան

_01.06.2009թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՇԵՆ ԿՈՆՑԵՌՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁԱՆՑ,
ԱՅԼ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ
ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՔԻՆ (ԻՆՍԱՅԴԵՌԱԿԱՆ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. Ընդհանուր դրույթներ

Կանոն 1-1. Կանոնակարգը: Անվանումը

- (ա) Սույն Կանոնակարգը ներառում է «Շեն Կոնցեռն» Փակ Բաժնետիրական Ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից Ընկերության կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու և ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման գործընթացի կարգավորման նպատակով սահմանված Կանոնները՝ դրանց կողիֆիկացիայի նպատակով:
- (բ) Սույն Կանոնագրի անվանումն է ««Շեն Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու և ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման մասին կանոնակարգ», իսկ կրճատ անվանումը՝ «Կանոնակարգ»:

Կանոն 1-2. Կառուցվածքը: Կողիֆիկացիան և հղումները

- (ա) Սույն Կանոնակարգը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Գլուխ 1՝ «Ընդհանուր դրույթներ», Գլուխ 2՝ «Ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից Ընկերության թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելը», Գլուխ 3՝ «Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանումը և բացահայտումը», Գլուխ 4՝ «Ինսայդերների ցուցակը և Ինսայդերի ցուցակը վարող պատասխանատու աշխատակիցը»:
- (բ) Գլուխները համարակալվում են արաբական թվերով:
- (գ) Վերնագրերը միավորում են «Շեն Կոնցեռն» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից սահմանված Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Կանոնակարգի օգտագործման պարզության նպատակով Վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված Կանոնների առարկան:
- (դ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում՝ ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2-1.»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):
- (ե) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝
- (1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն)։
 - (2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ (2)) կամ, եթե շարադրանքը առանձին տողերով չէ՝ հռոմեական փոքր թվերով (օրինակ՝ (ii)), և
 - (3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)) կամ, եթե շարադրանքը առանձին տողերով չէ՝ հռոմեական փոքր թվերով (օրինակ՝ (ii)):
- (զ) Սույն Կանոնակարգում Հղումները կատարվում են հետևյալ կանոններով՝
- (1) Վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները։
 - (2) Այլ Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «1-3(բ)(5)(Ա) Կանոնի համաձայն» հղումը նշանակում է «1-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն»։
 - (3) Եթե հղում է կատարվում նույն Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին, կամ նույն Ենթականոնի Կետին կամ Ենթակետին, կամ նույն Կետի Ենթակետին ապա հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «(բ)(5)(Ա) ենթականոնի համաձայն» հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն»։
 - (4) Սույն Կանոնակարգի որևէ Վերնագրի (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց «սույն Կանոնակարգի» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին։
 - (5) Որևէ ձևին կամ աղյուսակին հղում ենթադրում է Կանոնակարգի Հավելվածում ներառված տվյալ ձևը կամ աղյուսակը։

Կանոն 1-3. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

- (ա) Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում «Շեն Կոնցեռն» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից այն հաստատելու պահից:
- (բ) Սույն Կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում «Շեն Կոնցեռն» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից այն ուժը կորցրած ճանաչելու պահից:

Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

- (ա) Սույն Կանոնակարգի Կանոնները ներքին իրավական ակտ են և ընդունվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 170-րդ հոդվածի համաձայն, հիմք ընդունելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածը:
- (բ) Սույն Կանոնակարգի Կանոնները մեկնաբանվում են ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և Հաճախորդների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

Կանոն 1-5. Հասկացություններ

Սույն Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) **«Ընկերություն»**՝ «Շեն Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերություն.
- 2) **«Ներքին (ինսայդերական) տեղեկություն»**՝ ցանկացած չիրապարակված որոշակի տեղեկություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում է մեկ կամ մի քանի արժեթղթերին կամ դրանց թողարկողներին, և որի իրապարակումը կարող է էական ազդեցություն ունենալ նշված արժեթղթերի և (կամ) դրանց հետ կապված ածանցյալ գործիքների գների վրա: Մասնավորապես, ներքին (ինսայդերային) տեղեկություն կարող է հանդիսանալ՝
 - (Ա) չիրապարակված հաշվապահական հաշվետվությունները,
 - (Բ) Ընկերության ծախսերի, եկամուտների կամ շահույթի վերաբերյալ կանխատեսումներ,
 - (Գ) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների էական փոփոխությունները,
 - (Դ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ կազմակերպության փոփոխման վերաբերյալ տեղեկություններ,
 - (Ե) Ընկերության նշանակալից մասնակիցների կազմի փոփոխության վերաբերյալ տեղեկությունները,
 - (Զ) Ընկերության կառավարման մարմինների կազմի փոփոխություններ (քացառությամբ Ընկերության բաժնետերերի կազմի փոփոխությունները),
 - (Է) դատական վեճերում Ընկերության մասնակցության վերաբերյալ տեղեկություններ,
 - (Ը) Ընկերության ակտիվների և պասիվների արժեքի փոփոխության վերաբերյալ տեղեկություններ,
 - (Թ) Ընկերության վերակազմակերպման վերաբերյալ տեղեկություններ,
 - (Ժ) Ընկերության կողմից պայմանագրեր կնքելու կամ լուծելու վերաբերյալ տեղեկություններ,
 - (ԺԱ) արժեթղթերի նախատեսվող թողարկումների (լրացուցիչ թողարկումների) վերաբերյալ տեղեկություններ,
 - (ԺԲ) Ընկերության արժեթղթերի նախատեսվող հետգնումների կամ ձեռքբերումների վերաբերյալ տեղեկություններ,
 - (ԺԳ) Ընկերության խորհրդի կողմից շահութաբաժինների առաջարկվող մեծքության վերաբերյալ,
 - (ԺԴ) Ընկերության անվճարունակության կամ որոշակի պայմանագրով պարտավորությունների խախտման վերաբերյալ տեղեկություններ,
 - (ԺԵ) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ այլ տեղեկություններ:
- 3) **«Ինսայդեր»**՝
 - (ա) յուրաքանչյուր անձ, որն Ընկերության կապիտալում իր մասնակցության, Ընկերության կառավարման որևէ մարմնում իր անդամության, պաշտոնի կամ այլ պարտականությունների կատարման կամ ծառայությունների մատուցման կապակցությամբ տիրապետում է ներքին տեղեկությունների (առաջին խմբի ինսայդեր),
 - (բ) ներքին տեղեկության տիրապետող ցանկացած այլ անձ, որը ողջամիտ ուշադրություն գործադրելու դեպքում կարող էր տեղյակ լինել, որ այդ տեղեկությունը հանդիսանում է ներքին տեղեկություն (երկրորդ խմբի ինսայդեր),
 - (գ) յուրաքանչյուր անձ, որը ծանոթանում է ներքին տեղեկությանը, որի աղբյուրն ակնհայտորեն մեկ կամ ավելի ինսայդեր է,
- 4) **«Ընկերության արժեթուղթ»**՝ Ընկերության կողմից թողարկված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ցանկացած արժեթուղթ, ինչպես նաև Ընկերության կողմից թողարկված այն արժեթղթերը, որոնց համար հայցվում է թույլտվությունը կարգավորվող շուկայում առևտրին,
- 5) **«Օրենք»**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

**ԳԼՈՒԽ 2. Ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից
Ընկերության թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելը**

**Կանոն 2-1. Ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից
Ընկերության թողարկված արժեթղթերով գործարքների կնքումը**

- (ա) Ընկերության այն ղեկավար անձը, այլ աշխատակիցը կամ նշանակալից մասնակիցը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է Ընկերության արժեթղթերը (այսուհետ՝ Հաշվետու անձ), պարտավոր է այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելու, ինչպես նաև նրանց սեփականության իրավունքով պատկանող Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով գործարքներ կնքելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել Ընկերության Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակցին:
- (բ) (ա) ենթականոնով նախատեսված տեղեկացման ենթակա նվազագույն տեղեկություններն են՝
 - (1) գործարքի տեսակը,
 - (2) գործարքի կատարման օրը,
 - (3) գործարքի մյուս կողմի, շահառուի, իսկ առկայության դեպքում նաև միջնորդի վերաբերյալ տեղեկություններ,
 - (4) գործարքի արժեքը,
 - (5) գործարքի առարկան (այդ թվում՝ արժեթղթերի քանակը, տեսակը, դասը, անվանական արժեքը)
- (գ) Հաշվետու անձը պարտավոր է Ընկերության Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակցին ներկայացնել եռամսյակային հաշվետվություն Ընկերության արժեթղթերով կատարված գործարքների և հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ իրեն սեփականության իրավունքով պատկանող Ընկերության արժեթղթերի վերաբերյալ:
- (դ) (գ) ենթականոնով նախատեսված եռամսյակային հաշվետվությունը Ընկերության Ինսայդերների պատասխանատու աշխատակցին է ներկայացվում յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա հաջորդող ամսվա 15-ից 25-ն ընկած ժամանակահատվածում:

Կանոն 2-2. Ներքին տեղեկությունների հիման վրա Ընկերության արժեթղթերով գործարքների կատարումը

- (ա) Ընկերության այն ղեկավարը, այլ աշխատակիցը կամ նշանակալից մասնակիցը, որը սույն Կանոնակարգի և Օրենքի իմաստով հանդիսանում է նաև Ինսայդեր պարտավոր է ձեռնպահ մնալ իրեն հայտնի ներքին տեղեկությունների հիման վրա Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով իր կամ երրորդ անձանց հաշվին գործարքներ կատարելուց, Ընկերության արժեթղթերով գործարքներ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու խորհուրդ տալուց:
- (բ) (ա) ենթականոնով նախատեսված պահանջը չի գործում սկսած այն պահից, երբ ներքին տեղեկությունը բացահայտվում է Օրենքի 163 կամ 165-րդ հոդվածների հիման վրա:
- (գ) Ընկերության այն ղեկավարը, այլ աշխատակիցը կամ նշանակալից մասնակիցը, որը սույն Կանոնակարգի և Օրենքի իմաստով հանդիսանում է նաև Ինսայդեր պարտավոր է ձեռնպահ մնալ Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով իր կամ երրորդ անձանց հաշվին գործարքներ կատարելուց, Ընկերության արժեթղթերով գործարքներ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու խորհուրդ տալուց Ընկերության ֆինանսական (եռամսյակային և տարեկան) հաշվետվությունների հրապարակմանը նախորդող 15 օրացույցային օրվա և դրանք հրապարակելու օրվա ընթացքում:
- (դ) Ենթականոն (ա)-ով և (գ)-ով նախատեսված պահանջը տարածվում է Ընկերության արժեթղթերով հետևյալ գործարքների վրա,
 - (1) երբ Ինսայդերն Ընկերության արժեթղթերը ձեռք է բերել իրեն արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ մատուցող ներդրումային ընկերության միջոցով, եթե վերջինս սույն Կանոնակարգի և Օրենքի հիման վրա Ինսայդեր չի հանդիսանում,
 - (2) երբ Ինսայդերն Ընկերության արժեթղթերը ձեռք է բերել նվիրատվության պայմանագրի հիման վրա և նվերատուն սույն Կանոնակարգի և Օրենքի իմաստով Ինսայդեր չի հանդիսանում:

ԳԼՈՒԽ 3. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանումը և բացահայտումը

Կանոն 3-1. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանումը

- (ա) Ընկերությունը, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակներում ընկերության ղեկավարներն ու այլ աշխատակիցները պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցները ներքին տեղեկությունների գաղտնիությունն ապահովելու համար:
- (բ) Ընկերության յուրաքանչյուր մակարդակի ինսայդերներին արգելվում է իրենց գործունեության, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի կապակցությամբ իրենց հայտնի դարձած ներքին (ինսայդերական) տեղեկություն հրապարակելը, ինչպես նաև իրենց անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով՝ դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ընձեռելը (թույլատրել, չխոչընդոտել կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):
- (գ) Ընկերությունն իրավունք ունի սահմանել ներքին (ինսայդերային) տեղեկությունների պահպանման և դրանց հրապարակման կանխարգելման միջոցներ, որոնց նպատակն է՝
 - (1) ներքին տեղեկությունների օգտագործման սահմանված սահմանափակումների հիման վրա Ինսայդերների նկատմամբ վերահսկողության իրականացումը,
 - (2) ներքին (ինսայդերային) տեղեկությունների օգտագործման կարգի սահմանումը, այդ թվում նաև ինսայդերների կողմից ներքին (ինսայդերային) տեղեկությունների օգտագործումը ի վրնաս Ընկերության շահերի:
- (դ) Ներքին (ինսայդերային) տեղեկությունների գաղտնիության պահպանման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներն են՝
 - (1) Ընկերության հատուկ տարածքների ազատ մուտքի սահմանափակում,
 - (2) Ինսայդերների հշվառումը,
 - (3) ներքին (ինսայդերային) տեղեկություններ պարունակող նյութական կրիչների վրա «Գաղտնի» կամ «Հույժ գաղտնի» նախագրուշացումների, ինչպես նաև Ընկերության գտնվելու վայի վերաբերյալ տեղեկությունների գետեղումը: «Գաղտնի» և «Հույժ գաղտնի» համարվող տեղեկությունները պետք է մատչելի դարձվեն միայն ներքին (ինսայդերային) տեղեկություններին ծանոթանալու իրավունք ունեցող անձանց համար,
 - (4) ներքին (ինսայդերային) տեղեկությունների հասանելիության ապահովումը աշխատանքային պայմանագրերի, իսկ իրավաբանական անձ կոնտրագենտների դեպքում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա,
 - (5) Ընկերության աշխատակիցների և իրավաբանական (ֆիզիկական) անձ կոնտրագենտների կողմից ներքին (ինսայդերային) տեղեկությունների գաղտնիության պահպանման գրավոր համաձայնությունը,
 - (6) ներքին (ինսայդերային) տեղեկությունների մատչելիության ապահովումը միայն դրա համար հատկացված հատուկ վայրերում,
 - (7) ներքին (ինսայդերային) տեղեկություններ պարունակող և օրենքով սահմանված արխիվացման ժամկետից ավել պահպանվող փաստաթղթերի ոչնչացումը,
 - (8) աշխատատեղերի (սեղան, դարակ, աշխատանքային համակարգիչ) հասանելիության սահմանափակմանն ուղղված միջոցառումների սահմանումը:

Կանոն 3-2. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը

- (ա) Ընկերությունը պարտավոր է ապահովել ներքին (ինսայդերային) տեղեկությունների բացահայտումն ու հրապարակումը հաշվի առնելով Օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված պահանջներն ու նպատակները:

ԳԼՈՒԽ 4. Ինսայդերների ցուցակը և Ինսայդերի ցուցակը վարող պատասխանատու աշխատակիցը

Կանոն 4-1. Ինսայդերների ցուցակը

- (ա) Ընկերությունը պարտավոր է վարել Ինսայդերների ցուցակ:
- (բ) Ինսայդերների ցուցակի վարումը պետք է թույլ տա Ընկերությանը ստուգել և վերահսկել ներքին (ինսայդերային) տեղեկությունների շարժը՝ ըստ այդ տեղեկությունների առանձին մասերի:
- (գ) Ինսայդերների ցուցակը պետք է պարունակի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները:

Կանոն 4-2. Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակից

- (ա) Ընկերությունում պետք է լինի Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակից, որի վրա դրվում (բ) ենթակառուցված և 3-1(դ) ենթակառուցված նախատեսված պարտականությունների կատարման, միջոցառումների կազմակերպման ու կատարման ապահովման պարտականությունները:

(բ) Ինսալդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակիցը պարտավոր է

- (1) Ինսալդերների ցուցակում հստակորեն սահմանագատել ներքին (ինսալդերային) տեղեկություններին մշտապես հասանելիություն ունեցող և այդ տեղեկությունների հետ առնչվող այլ անձանց,
- (2) պարբերաբար նորացնել Ինսալդերների ցուցակը և ապահովել տվյալ պահին ներքին տեղեկությունների տիրապետող անձանց ընդգրկումը դրա մեջ.
- (3) ապահովել Ինսալդերների ցուցակում ներառված տեղեկությունների պահպանումն առնվազն 5 տարվա ընթացքում՝ տվյալ տեղեկության ինսալդերների ցուցակում ներառման օրվանից սկսած.
- (4) ապահովել Ինսալդերների ցուցակը ներկայացնել Կենտրոնական բանկ՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով.
- (5) Յուրաքանչյուր Ինսալդերին ծանոթացնել սույն Կանոկարգով և դրանով նախատեսված հարաբերությունները կարգավորող նորմերին.
- (6) ստեղծել ներքին (ինսալդերային) տեղեկությունների օգտագործմանն ուղղված նորմերի պահպանման համար անհրաժեշտ պայմաններ: